ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Լեռնանիստ, /094-55-33-04, lernanist1828@mail.ru,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 ՀՈՒԼԻՍԻ 2020թվականի N 48-Ա

ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի թիվ 843-ն որոշմամբ, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Թույլատրել Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի բնակիչներ՝ Զեփյուռ Հարությունյանին, Արա Վարդանյանին, Աննա Մկրտչյանին , Գագիկ Ալոյանին, Անի Սարգսյանին, Արմիկ Գյուրջյանին, Նունե Բարեղամյանին, Սուսաննա Խաչատրյանին, Մարզպետ Նիկողոսյանին և Անահիտ Վարդանյանին իրենց սեփական հասարակական առևտրի սրահներում 2020 թվականի երրորդ եռամսյակում ոգելից խմիչքների և ծխախոտի վաճառքի իրացում կազմակերպելու համար:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐՏՅՈՄ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**

20 20թ. հուլիսի 1
գ.Լեռնանիստ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Լեռնանիստ, /094-55-33-04, lernanist1828@mail.ru,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ՀՈՒԼԻՍԻ 2020թվականի N 49 -Ա

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ԳՅՈՒՂԻ ԲԿԱԿԻՉՆԵՐ՝ /ՀԱՆԳՈՒՅՅԱԼ/ ԱՍՏՂԻԿ ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ ՔԱՋԻԿ ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ ՍՈՒՍԱՆՆԱ ՄԵԼՔՈՆՅԱՆԻՆ ԵՎ ԼՈՒՍԻՆԵ ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-ն որոշմամբ հաստատված կարգի 48 կետով և հիմք ընդունելով համասեփականատեր՝ Քաջիկ Մարգարյանի 2020 թվականի հուլիսի 7-ի դիմումը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե՝

1. Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի բնակիչներ՝ /հանգուցյալ/ Աստղիկ Մարգարյանին, Քաջիկ Մարգարյանին, Սուսաննա Մելքոնյանին և Լուսինե Մարգարյանին սեփականության իրավունքով պատկանող (սեփականության իրավունքի գրանցման վկայական 1332947, տրված 2003 թվականի հոկտեմբերի 24-ին) Լեռնանիստ համայնքում գտնվող տանը տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ Լեռնանիստ համայնք 2-րդ փողոց տուն 9:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՏՅՈՄ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

2020 թ. հուլիսի 7
գ.Լեռնանիստ

7/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Լեռնանիստ, /094-55-33-04, lernanist1828@mail.ru,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ՀՈՒԼԻՍԻ 2020թվականի N 50 Ա

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Շմավոն Ռուբենի Բարեղամյանին սեփականության իրավունքով պատկանող Լեռնանիստ համայնքի 13-րդ փողոց թիվ 3,5 հասցեի բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասում /կադաստրային ծածկագիր 07-033-0005-0037/ տալ ճարտարապետահատակագծային առաջադրանք՝ տնտեսական նշանակության մեկ հարկանի խորդանոցի կառուցման նախագծային փաստաթղթերի մշակման համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ Շմավոն Ռուբենի Բարեղամյանի որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՏՅՈՄ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

20.20 թ. հուլիսի 7
գ.Լեռնանիստ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Լեռնանիստ, /094-55-33-04, lernanist1828@mail.ru,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ՀՈՒԼԻՍԻ 2020թվականի N 51-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Յուրի Ամասիայի Աֆրիկյանի (ծնված 1967 թվականի օգոստոսի 4-ին) դիմումը՝ սեփականության իրավունքով Յուրի Ամասիայի Աֆրիկյանին պատկանող Կոտայքի մարզ Լեռնանիստ համայնք 2-րդ փողոց թիվ 20 հասցեում գտնվող (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 19092018-07-0086, տրված 2018 թվականի սեպտեմբերի 19-ին), կառուցապատված հողամասին կից ընդլայնման նպատակով, ուղղակի վաճառքի ձևով իրեն օտարելու համայնքային սեփականություն հանդիսացող Կոտայքի մարզ Լեռնանիստ համայնք 2-րդ փողոց թիվ 20/1 հասցեում գտնվող 07-033-0092-0005 կադաստրային ծածկագրի 89,28 քառ.մ մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 07072020-07-0101, տրված 2020 թվականի հուլիսի 7-ին):
Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի առաջին մասի 8-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մայիսի 26-ի թիվ 550-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով Լեռնանիստ համայնքի ավագանու 2020 թվականի հունիսի 29-ի թիվ 26-Ա որոշումը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Յուրի Ամասիայի Աֆրիկյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ Լեռնանիստ համայնք 2-րդ փողոց թիվ 20 հասցեում գտնվող (կադաստրային ծածկագիր 07-033-0092-0001) կառուցապատված հողամասին կից՝ Կոտայքի մարզ Լեռնանիստ համայնք 2-րդ փողոց թիվ 20/1 հասցեում գտնվող 07-033-0092-0005 կադաստրային ծածկագրի 89,28 քառ.մետր մակերեսով հողամասը ընդլայնման նպատակով, ուղղակի վաճառքի ձևով օտարել իրեն՝ կադաստրային արժեքով:

2. Սահմանել, որ հողամասի սեփականատերը սույն որոշման ընդունումից հետո, 15-օրյա ժամկետում Լեռնանիստ համայնքի բյուջեի N 900125008103 հաշվին պետք է վճարի հողամասի կադաստրային արժեքը, որը կազմում է 19820,16 (տասնինը հազար ութ հարյուր քսան դրամ տասնվեց լումա) Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Հանձնարարել աշխատակազմի քարտուղար Հովհաննես Մարգարյանին՝ հողօգտագործողի կողմից սույն որոշման 2-րդ կետում նշված գումարի վճարումից հետո 10-օրյա ժամկետում հողօգտագործողի հետ կնքելու հողամասի առուվաճառքի պայմանագիր:

4. Սահմանել, որ սույն որոշման ընդունումից հետո, հողամասը ձեռք բերողի կողմից 15-օրյա ժամկետում վճարումը չկատարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

5. Ընդունել ի գիտություն, որ առուվաճառքի պայմանագրից ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՏՅՈՄ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

2020 թ. հուլիսի 8
գ.Լեռնանիստ

√

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Լեռնանիստ, /094-55-33-04, lernanist1828@mail.ru,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ՀՈՒԼԻՍԻ 2020թվականի N 52-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ ,48 -րդ և 51-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով քաղաքացի Յուրի Ամասիայի Աֆրիկյանի լիազորված անձ՝ Էդուարդ Արտաշեսի Մանուկյանի 2020 թվականի հուլիսի 8-ի դիմումը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Յուրի Ամասիայի Աֆրիկյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ Լեռնանիստ համայնք 2-րդ փողոց թիվ 20 հասցեում գտնվող (կադաստրային ծածկագիր 07-033-0092-0001) և իրեն ընդլայնման նպատակով, ուղղակի վաճառքի ձևով օտարված Կոտայքի մարզ Լեռնանիստ համայնք 2-րդ փողոց թիվ 20/1 հասցեում գտնվող (կադաստրային ծածկագիր 07-033-0092-0005) բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասերը միավորել և միավորված անշարժ գույքին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ Լեռնանիստ համայնք 2-րդ փողոց թիվ 20:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՏՅՈՄ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

20 20թ. հուլիսի 8
գ.Լեռնանիստ